



ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայ-թուրքական յարաբերությանց վերաբերեալ Ապրիլ 22-ի համաձայնութեամբ հանդէս եկան զոյգ երկիրներու արտաքին գործոց նախարարութիւնները: Այդտեղ անդրադարձ կայ ``Ճանապարհային Քարտէս``ի մը որ կը միտի յանգիլ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու կարգաւորման: Յաւելեալ տուեալներ չեն բացայայտուած այդ համաձայնութիւնը բաղկացնող կետերուն շուրջ:

Առաջին հերթին խիստ զարմանալի կը թուի յայտարարութեան թուականը որ կը զուգահիշի Ապրիլ 24-ի նախօրէին: Այս օրուան անպատեհ ըլլալը ոչ թէ միայն մեր ազգային ողբերգութիւնը խորհրդանշող թուականին մօտ օր մը ըլլալն է ան, այլ նաեւ կը համարուի հսկայ զիջում մը Թուրքիոյ. արդարեւ, մեր ժողովուրդը մեծ յոյսեր ուներ որ ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ՝ Պրն. Պարաք Օպաման պիտի յարգէ իր խոստումը եւ իր այդ առիթով արձանագրելիք ելոյթին մէջ պիտի յիշէ ցեղասպանութիւն բառը: Այս յայտարարութիւնը սառ ջուր թափած եղաւ այդ ակնկալութեան վրայ եւ շարժառիթը ստեղծեց որ նախագահը աննպատակայարմար գտնէ նման յայտարարութիւն մը որպէսզի վնաս հասցուցած չըլլայ հայ-թուրքական ընթացող բանակցութեանց:

Միաժամանակ ընդվզեցուցիչ է այն երեւոյթը որ նման ազգային հիմնահարց մը ընդգրկող բանակցութիւններ կը տարուին գիտութեամբը միայն ու միայն բուռ մը հայրենի պատասխանատուներու, շրջանցելով յատկապէս սփիւռքը եւ այդտեղի մեր աւանդական կառոյցները, որոնք հիմնական ներկայացուցիչներն են պահանջատէր սփիւռքահայութեան:

Անդին կը մնայ այս աստիճան մշուշապատուած կերպով հրամցուիլը հայ-թուրքական այս բանակցութեան գործընթացին եւ համաձայնուած կետերուն. երեւոյթ մը որ իրաւացիօրէն խոր եւ մտահոգիչ կասկածներ կը յառաջացնէ հայ ժողովուրդի զաւակներուն մօտ ըլլան անոնք հայրենաբնակ եւ կամ՝ սփիւռքահայ:

Իբրեւ եզրայանգում՝ մենք կ'արձանագրենք մեր յստակ վերապահութիւնը հայ-թուրքական այս բանակցութեանց գործընթացին նկատմամբ եւ կը պահանջենք որ հայրենի իշխանութիւնները առաջին հերթին տան մեր ժողովուրդին այն յստակացումները եւ մանրամասնութիւնները որոնք դարձած են համաձայնութեան առանցք: Միաժամանակ, անհրաժեշտ եւ հիմնական կը



ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նկատենք որ յետագային նման գործընթացեր ընթանան թափանցիկության սկզբունքով եւ ազգային մեր հիմնական կառույցներուն համապարփակ մասնակցութեամբ. ըլլան այդ կառույցները հայրենիքի մէջ թէ՛ սփիւռքի: Այսօրինակ աշխատելաձեւը վստահաբար իր դրական ազդեցութիւնը պիտի ունենայ մեր ժողովուրդի միասնականութեան վրայ եւ մենք ազգովին ու համադրուած ուժերով պիտի կարենաք դիմագրաւել նոր օրերու հրամայականները:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ապրիլ 27, 2009